

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ալմաստը յուրահատուկ բնական հանածո է, ունի բյուրեղային կառուցվածք և մարդկությանը հայտնի է եղել դեռևս հինգ հազար տարի առաջ: Այն իր կարծրությամբ, շփման դիմացկունությամբ, ջերմահաղորդականությամբ և մի շարք այլ հատկություններով առաջինն է բնական հանածոների շարքում: Մեխանիկական մշակմամբ որոշակի անկյունների տակ նիստավորման արդյունքում ալմաստի բյուրեղը ձեռք է բերում թափանցելիություն, յուրահատուկ փայլ, գեղեցկություն, Այդ ճանապարհով մշակված ալմաստը կոչվում է ադամանդ:

Հնագույն ժամանակներից հայերը պատկերացում են ունեցել ալմաստի և ադամանդի մասին և զբաղվել են դրանց մշակմամբ ու վաճառքով: 17-րդ դարում պատմաբան Առաքել Թավրիզեցին իր մի շարք հոդվածներում հիշատակել է թանկարժեք քարերի և դրանց հատկությունների մասին: Ավելի ուշ Ցարական Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Քերոբե Պատկանյանը 1873 թվականին հրապարակում է «Թանկարժեք քարեր, նրանց անվանարկումը և հատկությունները հայերի պատկերացմամբ 17-րդ դարում» աշխատությունը, որտեղ ներկայացվում են մի շարք թանկարժեք քարերի, այդ թվում ալմաստի և ադամանդի ֆիզիկո-մեխանիկական, օպտիկական, ինչպես նաև «կախարդական» հատկությունների մասին:

Մեր օրերում ադամանդի համաշխարհային արտադրությունը թևակոխել է ինովացիոն նոր փուլ, այս բնագավառում այսօր լայնորեն կիրառվում են բարձր տեխնոլոգիաների ոլորտում առկա նորամուծությունները, որոնք հնարավորություն են ընձեռում էապես բարձրացնել ալմաստների նիստավորման ճշտությունը (միկրոնների մակարդակով), դրանով իսկ էապես բարձրացնելով ադամանդների շողարձակման հատկությունները:

Մյուս կողմից, հումքի լազերային գծանշման մեթոդների ներդրումը թույլ է տալիս էապես բարձրացնել միավոր կարատաժի ալմաստից ադամանդների ելքի տոկոսը: Այս ամենի հետ մեկտեղ ոլորտում ստեղծվել են նորագույն մեթոդներ, որոնք թույլ են տալիս ֆոկուսացված լազերային փնջերի միջոցով «բուժել» ադամանդների ծավալային արատները: Ադամանդագործության ոլորտում հերթական նորամուծությունը կարող է լինել մի շարք հետազոտական կենտրոնների կողմից հնչող հայտարարություններն այն մասին, որ շուտով հումքի շուկա կարող է հանվել իդեալական կառուցվածքով մեկ և ավել կարատաժի արհեստական ալմաստներ:

Այսօր, չնայած մանր բյուրեղների տեսքով, նմանատիպ արհեստական ալմաստներ արտադրվում են հայկական «Ալմաստ» գործարանում, որոնք հիմնականում կիրառվում են տեխնիկական նպատակներով կտրող և հղկող գործիքների պատրաստման արտադրություններում:

Հայաստանի աշխարհագրական դիրքի և արդյունաբերական հնարավորությունների պայմաններում բավական հրապուրիչ են ադամանդի արտադրության

զարգացման հեռանկարները: Այդ արտադրությունը յուրահատուկ է իր ցածր էներգա- և նյութատարությամբ, դրա կազմակերպումը չի պահանջում առանձնապես մեծ կապիտալ ներդրումներ, կարևոր է նաև արտադրության աշխատատարությունը, որը մեծաքանակ աշխատատեղերի ստեղծման, այդ թվում հանրապետության հեռավոր շրջաններում, նպաստավոր պայմաններից է:

Աղյանանդի արտադրությունն որպես արդյունաբերության ճյուղի ձևավորումը Հայաստանում սկսվել է 1969 թվականից, երբ Միութենական կառավարության որոշմամբ աղյանանդների արտադրության 8 խոշոր ձեռնարկություններից մեկը տեղաբաշխվեց Հայաստանում: Այդ գործարանը կառուցվեց Նոր Հաճն ավանում, որի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1976 թվականին, իսկ զործարանն ամբողջությամբ՝ 1981-ին: Այն սկզբնական շրջանում գտնվում էր «Կոփատալ» արտադրական միավորման կազմում (ներկայումս «Սապփիր» ՓԲԸ), իսկ հետագայում վերածվեց ինքնուրույն ձեռնարկության (ներկայումս «Շողակն» ՓԲԸ): Հայրենական աղյանանդների առաջին խմբաքանակը թողարկվեց 1971 թվականին փոքր արտադրամասում, ինչն էլ հիմք հանդիսացավ նորակառույց զործարանում մեծածավալ արտադրության կազմակերպման համար:

Անկախացումից հետո մեր երկրի տնտեսության ազատականացմամբ և շուկայական հարաբերությունների որդեգրմամբ նոր հնարավորություններ ստեղծվեցին աղյանանդի արտադրության ընդլայնման համար: Վերջին տարիներին աղյանանդի արտադրությունը Հայաստանում մեծ զարգացում ապրեց, Հայաստանի տարածքում ներկայումս գործում են 50-ից ավելի աղյանանդագործական ձեռնարկություններ, որոնցից 12-ը աշխատում են առանց ընդհատվող արտադրական ցիկլի: Արտադրական հզորությունների ցուցանիշով առաջատարը «Շողակն» է: Որակական առումով «Ռոզի Բլու» բելգիական աղյանանդագործական ընկերության կազմում գտնվող Հայաստանի «Լորի» գործարանի արտադրանքը աշխարհում համարվում է լավագույներից մեկը:

Ներկայումս աղյանանդի արտադրությունը մեծ թափով զարգանում է Հանրապետության շրջաններում՝ Նոր Հաճն, Թալին, Եղեգնաձոր, Գորիս, Ստեփանավան և այլն: Այս ոլորտում աշխատողների ընդհանուր քանակը հասնում է մինչև 3000 մարդու: Վերջին 2-3 տարիներին աղյանանդագործության ճյուղի համախառն տարեկան արտահանման ծավալները կազմել են միջին հաշվով մոտ 250 մլն ԱՄՆ դոլար:

Անկախ այն հանգամանքից, որ ներկայումս աղյանանդի արտահանումը հանրապետության ընդհանուր արտահանումների ծավալում ունի բանականաչափ մեծ տեսակարար կշիռ, այդուհանդերձ, մեր հանոզմամբ, հանրապետության արտահանման կառուցվածքը ենթակա է բարելավման: Հանրապետության վճարային հաշվեկշիռի ներկայիս խիստ բացասական տալոն չի համապատասխանում տնտեսության զարգացման խնդիրներին, և անհրաժեշտ է մոտակա ժամանակահատվածում արտահանումը հասցնել տարեկան ոչ ավելի քան մեկ միլիարդ ԱՄՆ դոլարի: Դա կարող է տեղի ունենալ ի հաշիվ արտահանման ներուժ ունեցող այլ արտադրատեսակների, որի դեպքում աղյանանդների արտահանման

ծավալների աճի հետ զուգընթաց կնվազի դրա տեսակարար կշիռը:

Հայաստանն արդեն աշխարհում ճանաչում է գտել, որպես որակյալ աղանդներ արտադրող երկիր, որոշ ընկերություններում թողարկվում են բարձր ճշտությամբ մշակված աղանդներ, որոնք աշխարհում հայտնի են «Three excellent» (երեք գերազանց) անունով, և որոնք մեծ պահանջարկ ունեն զարգացած երկրներում: Լույն կարատաժի դեպքում նման որակի աղանդների գինը 40-50%-ով գերազանցում է միջին որակի աղանդների գինին: Հայ գործարանների մոտ կա յուրահատուկ ձգտում աղանդի արտադրության բիզնես ծավալելու ուղղությամբ: Այսօր արտադրության համար անհրաժեշտ հաստոցների և սարքավորումների մեծ մասը արտադրվում են Հայաստանում («Սապֆիր» ՓԲԸ, «Ինտերստանոկ» ԲԲԸ) և վերջապես այժմասի մշակման ուրույն տեխնոլոգիական արդյունքների մասնագետներ պատրաստելու հարցը դժվարություններ չի ներկայացնում: Փաստորեն, հանրապետությունում առկա են բոլոր նախադրյալները աղանդագործության զարգացման և հետագա ընդլայնման համար:

Պատմական առումով հետաքրքիր է աղանդագործության զարգացման Իսրայելի փորձը, որն իր պետականության հաստատումից ի վեր ստեղծեց բարենպաստ պայմաններ աղանդի արտադրության զարգացման համար: Ներկայումս այդ երկրում, որի բնակչությունը միայն 1.5 անգամ է գերազանցում Հայաստանի բնակչությանը, աղանդի արտադրության ոլորտում աշխատում են 2.7 մլն կարատ կամ ավելի քան 1.5 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ ցուցանիշները Հայաստանի աղանդների արտադրության ներկա ծավալները գերազանցում են աշխատողների թվով մոտ 3 անգամ, իսկ արտախանգող աղանդների քանակով փաստյալ անգամ: Հայաստանում աղանդների արտադրության զարգացման գործընթացում առանձնապես կարևոր է փոքր և միջին ընկերությունների ստեղծումը (մինչև 100 աշխատատեղով), նախկինում արդյունաբերական ներուժ ունեցող բազմաթիվ բնակավայրերում: Այդպիսի ծավալի արտադրության կազմակերպման համար մեր գնահատմամբ անհրաժեշտ է միջին հաշվով 100 հազար ԱՄՆ դոլարի ծավալի ներդրումներ, որը կարող են իրականացնել տեղական գործարարները:

Արժամանակ անհրաժեշտ է նշել, որ մի շարք հանգամանքներ դժվարություններ են ստեղծում աղանդների արտադրության զարգացման համար: Պրանցից առաջինը բերես արտադրության համար անհրաժեշտ հումքի՝ բնական այծաստների, համեմատաբար բարձր արժեքն է համաշխարհային շուկայում, որը հանգեցնում է արտադրության կազմակերպման համար զգալի շրջանառու միջոցների անհրաժեշտության: Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ Հայաստանում աղանդագործական արտադրության շահութաբերությունը դեռևս շատ ցածր է (15-20%-ի սահմաններում):

Աղանդի արտադրության խթանման և հատկապես Հայաստանի տարածքում դրանց արդյունավետ տեղարաշխման համար, ակնհայտորեն, անհրաժեշտ

է պետական աջակցություն, քանի որ տվյալ ոլորտի զարգացումը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն և կարող է հանդիսանալ լուրջ նախադրյալ բարձր տեխնոլոգիաների զարգացման համար: Ոլորտի զարգացման առումով թերևս առավել նպատակահարմար է ներկայանում փոքր և միջին ընկերությունների ձևավորումը: Սակայն, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանք, ըստ էության, դեռևս ինքնուրույն չեն կարող լուծել այժմասի հումքի հայթայթման և պատրաստի արտադրանքն այլ շուկաներում իրացման խնդիրները: Մասնավորապես, այդպիսի կարևորագույն գործառույթների իրականացման համար կարելի է ստեղծել պետական բաժնեմասով մասնագիտացված ընկերություն, որը բացի վերոհիշյալ խնդիրներից կզբաղվի նաև այդ արտադրության յուրահատուկ հարցերի լուծմամբ: Այդպիսի բաժնետիրական ընկերության պետական բաժնեմասը կարող է տնօրինվել հանրապետության Գանձապետարանի կամ պետական մեկ այլ մարմնի կողմից, իսկ որպես բաժնետերեր, անշուշտ, հանդես կգան մասնավոր ընկերությունները:

Կարևոր հարց է նաև Ռուսաստանի և Հայաստանի միջև այդ ուղղությամբ միջպետական համաձայնագրի կնքումը: Ընդ որում, մեր կարծիքով, ցանկալի է, որ այդ համաձայնագրով ամրագրվի տարեկան մինչև մեկ միլիոն կարատ այժմաստի հումքի ստացման փաստը: Պայմանագրային հիմունքներով հումքի բաշխումը փոքր և միջին ընկերություններին նպատակահարմար է դնել վերոհիշյալ կատույցի վրա: Հաշվի առնելով, որ ռուսական «Алмаз России-Саха» և հարավ աֆրիկյան միության «Դե Բիրս» սինդիկատները աշխարհի այժմաստի հումքի հիմնական տնօրինողներն են, և անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրի հետ ծավալել սերտ համագործակցություն:

Հայաստանում այս ոլորտի զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է լուծել ևս մի շարք խնդիրներ՝ ընդունել «Թանկարժեք մետաղների կ քանկարժեք քարերի մասին» 33 օրենքը: Ի դեպ Ռուսաստանն այդպիսի օրենք ընդունել է դեռևս 1995-ին: Նպատակահարմար է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում կազմակերպել այժմաստների մշակման ամբիոն: Կարևոր է նաև այդ ոլորտի բանվոր-մասնագետների համար ուսումնական ձեռնարկի պատրաստումը և հրապարակումը և այլ հարցեր: Այս ոլորտի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հարկային օրենքներում՝ մասնավորապես ներքին շուկայում աղանդների իրացման դեպքում ավելացված արժեքի հարկից ազատումը: Այս միջոցառումը հնարավորություն ընձեռեց, որպեսզի ապահովվի տեղական արտադրության աղանդների լայն օգտագործումը ոսկերչության մեջ և անշուշտ կնպաստի նաև ոսկերչության զարգացմանը հանրապետությունում:

Ամփոփելով, պետք է նշել, որ Հայաստանում աղանդագործության զարգացման խնդիրը չի սահմանափակվում վերը նշված հարցերով, դրանք, անշուշտ, բազմաթիվ են և տվյալ ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է միջոցառումների մի ամբողջ համալիրի իրականացում: